ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/39 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնդիկավոր առանցքակալների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 29 հունիսի 2020թ.
ժամը. 17:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Հ. Նոնինյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ) **Գ. Խոսրովյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ) **Ա. Գևորգյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ) **Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀմ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման և գնահատման մասին

(Մ. Առաքելյան)

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնդիկավոր առանցքակալների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ հասցեում, 2020 թվականի հունիսի 29-ին, ժամը 17:00-ին:

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գինդիկավոր առանցքակալների գնման հայտով նախատեսված նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Գնդիկավոր առանցքակալներ	4000000 (չորս միլիոն)

1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումը
1	«ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ
2	«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ
3	«Ինֆոտենդեր» ՍՊԸ
4	«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
5	«ԷՆԵՐՍԻՍ» ՍՊԸ

1.2 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

«ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում կցված չեն առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և գնային առաջարկը: «ԷՆԵՐՍԻՍ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում հայտում կցված չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Մյուս մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.3 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

Մասնակիցների կողմից կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.4 Մասնակիցների առաջարկած գինը

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
1	«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ	2833380	3400056
2	«Ինֆոտենդեր» ՍՊԸ	2600000	2600000
3	«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	2950000	3540000
4	«ԷՆԵՐՍԻՍ» ՍՊԸ	2291667	2750000

1.5 Հայտերի գնահատման մասին:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար գնդիկավոր առանցքակալների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» և «Ինֆոտենդեր» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել: «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունը՝ ապրանքի ամբողջական նկարագրում տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի ճշտգրված տարբերակում ներկայացված դրույթներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «ԿՌ Պրոջեկտս» ՍՊ ընկերության հայտը մերժել 1-ին չափաբաժնի մասով:
2. Նիստը կասեցնել և ծանուցել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» և «ԷՆԵՐՍԻՍ» ՍՊ ընկերություններին մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու արձանագրված անհամապատասխանությունների շտկումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

1.6 «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ 2020 թվականի հունիսի 22-ին և 24-ին ստացվել են հարցում, որոնց վերաբերյալ պարզաբանումներ տրամադրվել է համապատասխանաբար 2020 թվականի հունիսի 22-ին և հունիսի 25-ին և հրապարակվել է գնումների պաշտոնական ինտերնետային կայքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ հայտերի գնահատման նիստ հրավիրել անհամապատասխանությունների մասին շտկված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Հ. Նոնինյան

_____ Գ. Խոսրովյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կ. Բարսեղյան